



31 հոկտեմբերի 2023 թ.

**HSBC Հայաստանը «Լավագույն ԿՍՊ բանկ» և «Բազմազանություն և Ներառականություն խթանող լավագույն բանկ» Euromoney ամսագրի 2023 թ.-ի Գերազանցության մրցանակաբաշխություն**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ HSBC Հայաստան/Բանկ) արժանացել է հեղինակավոր Euromoney ամսագրի 2023թ.-ի Գերազանցության երկու մրցանակներին: Բանկը հաղթող է ճանաչվել Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ոլորտում իրականացրած աշխատանքների, ինչպես նաև Հայաստանի բանկային ոլորտում բազմազանության և ներառականության խթանման ուղղված ջանքերի համար:

«Euromoney» առաջատար պարբերականը կազմակերպում է ամենամյա մրցանակաբաշխություն՝ պարգևատրելով գերազանցության մրցանակներով ամենահեղինակավոր բանկերին և բանկիրներին:

Այս տարի HSBC Հայաստանին շնորհվել են մրցանակներ հետևյալ անվանակարգերում.

- Լավագույն ԿՍՊ բանկ Հայաստանում
- Բազմազանություն և ներառականություն խթանող լավագույն բանկ Հայաստանում

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն, ինչպես նաև բազմազանության և ներառականության ապահովումն այն առանցքային սկզբունքներից են, որոնցով առաջնորդվում է HSBC Հայաստանը հաճախորդներին սպասարկելիս, համայնքերին աջակցելիս և միմյանց հետ հաղորդակցվելիս:

«Հայաստանում հիմնադրման առաջին իսկ օրերից մենք պարտավորություն ենք ստանձնել ներդրում ունենալու մեր հաճախորդների, գործընկերների և համայնքի բարեկեցության ապահովման գործում: Այս համատեքստում, որպես գործատու մենք ձգտում ենք յուրաքանչյուր աշխատակցի համար ստեղծել նպաստավոր միջավայր զնահատված և հարգված զգալու համար՝ խթանելով բազմազանությունն և ներառականությունն աշխատավայրում: Իբրև կորպորատիվ սոցիալական պատասխանատու կազմակերպություն, մենք ձգտում ենք նաև ԿՍՊ ծրագրերի միջոցով նշանակալից և տևական ներդրում ունենալ համայնքների կյանքում», - ասաց HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սելյանյանը:

«Մեզ համար պատիվ է նման հեղինակավոր ամսագրի կողմից արժանանալ մրցանակների, հատկապես ԿՍՊ և բազմազանության և ներառականության ոլորտներում, քանի որ դրանք այն սկզբունքներն են, որոնք, որպես պատասխանատու ֆինանսական հաստատություն, մենք համարում ենք մեր ինքնության անբաժանելի մաս: Ներկա մարտահրավերներով լի ժամանակաշրջանում այս մրցանակներն էլ ավելի արժեքավոր են մեզ համար, քանի որ քաջալերում են գործել ավելի ակտիվ, սահմանել ավելի բարձր նշանդրեր և նպաստել մեր երկրի կայուն զարգացմանը»:

### **HSBC Խումբ**

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի մայր ընկերությունն է, որի գլխամասը գտնվում է Լոնդոնում: Խումբը իր հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխարհի 62 երկրներում և տարածաշրջաններում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 3,021 միլիարդ ԱՄՆ դոլար:

### **HSBC Հայաստան**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 6 գրասենյակի և մոտ 310 աշխատակցի միջոցով: 2023 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 334 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: